

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարեկանը 6 ռուբլ:
Ուղարկելու համարները 5 կողովով:

Թիֆլիսում գրվում են Հայաստանի ամբողջական մեջ:
Առարարությունները պետք է ուղարկել
Թիֆլիս. Редакция «Мелк»

Խմբագրությունը բաց է առաջօրե 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Յայտարարությունները ընդունվում են ամեն իրագույն:

Յայտարարությունների համար գնաճում է:
Խմբագրությունը լույս է տեսնում 2 կողով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տաղանդները կորչում են.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ, Նամակ Շամախուց, Ներքին տարեր—
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Պապական խնդրի ծա-
գումբ, Վաղարշապատի Վարդանի: Միացեալ ծա-
կերութեանը հայտը, Նամակ Թիֆլիսից: ԱՐ-
տաքին տարեր—ՊԱՏԱՐԱՐՈՒՆՆԵՐ—ՅԱՅԱՐԱՐ-
ՈՒՄԹԻՒՆՆԵՐ—ԲԱՆԱՐԱՐՈՒՆՆԵՐ, Հրեշտա՛ր է:

ՏԱՂԱՆԴՆԵՐԸ ԿՈՐՉՈՒՄ ԵՆ

ԻՆչքան տաղանդներ կան հայոց աղ-
գի մեջ.—Ո՛վ է գիտի, քննել ու գնահա-
տել նրանց:

Մի երիտասարդ է յայտնվում, որ տա-
ղանդ ունի դեպի գիտություն արհեստը,
բայց նա աղքատ տղայ է ո՞վ է նրան օգ-
նում, ով է նրան ուղարկում գիտություն
դպրոց,—ոչ ոք: Բայց երբ որ այդ տղան
դառնում է մի լազարիի, մի ՏԵՐ-ՂԱՔԱՍՈՒՄԻ,
մի ՇԵՆԿՈՒՄԻՍԻ, մեք թե՛ն ոչինչ չենք տա-
րի նրան օգնելու: Համար, փրկում, պար-
ծենում ենք, որ ունենք լազարիներ, ՏԵՐ-
ՂԱՔԱՍՈՒՄԻՆ, ՇԵՆԿՈՒՄԻՍԻՆ:

Մի աղքատ տղայ ձիւք է ցոյց է տալիս
դեպի նկարչութիւն: Նրան կամ ոչ ոք մե-
զանք, մեր հարուստները չէ օգնում, կամ
օգնում են օտարները: Այնպէս, աղքատ
տղան դառնում է մի երեւելի նկարիչ, մի
ԱՅԿԱՊՈՒՄԻՍԻ, —նա ահա մենք ոչինչ չարած
պարծենում ենք, որ ունենք մի ԱՅԿԱՊՈՒ-
ՄԻՆ...

Մեր հարուստները, ինչպէս նորերում
ապրելը, տգէտ, անազգայանք, անգրագիտ
մարդիկ են, նրանք ի՛նչ փոյժ հայ հասա-
րակութեան մեջ յայտնվող տաղանդներ
նրանք ոչ պէտք ունեն այդ տաղանդներին
նպաստելու, ոչ էլ կարող են նրանց գնա-
հատել, իսկ հասարակութեան մեջ չը կայ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԵՏԱՌՈՐ Է

Երեկոյան ըննել, Ալեքսանդրեան պարտէի
ծառերի տակ, առանձնացած նստած էինք երեք
ընկեր: Ահի մեզանից, որ աւելի զանգառա-
ւոր և հետաքրքար աւելի ծանօթացած էր թուում
կենսական, մաղթում էր չուտ ծերանալ և մեռ-
նել: Իսկ ինձ, որ կենսական աւելի գոհ էի, ըն-
տանիքի ծոցում, թէ՛ն նրկական դժուարու-
թեան մեջ, յաւիտեան չը մտնեմք էր բազմալի,
և ասացի: Արդե՛հ, վիճարարում էինք, և ընկերս
փոխեց խօսքն և ասաց թէ՛ հանգիստ և միջ-
թարուծիւն, տաճարային աշխատանքն միջը
զուգեք ընտանիքի ծոցում կարելի է գտնել: Բայց
բեր ինձ կին, յանգնեալ էր, որ իր սիրովն ու
չնորձով, ցանցայ տունը զարգած էրկայ սիրան
ու միայն գրաւել: Գրա՛ւ համար, ասացի, պէտք է
կենսականներն իրար յարմար լինեն: Իրար յար-
մար լինելու համար, պէտք է իրար ճանաչեալ,
իրար ճանաչելու համար, պէտք է իրար հետ ա-
զատ յարաբերութեան մեջ լինեն: Առանց այդ

Համբաւութեան, որ կարողանաք հիմ-
նաւոր ընկերութիւններ կազմել, բարեգոր-
ծական ընկերութիւններ հիմնել մեր մեջ
յայտնվող տաղանդներին ուսում տալու
համար:

Եւ ահա այդ տաղանդները կորչում, ան-
հետանում են մեր մեջ ապարդիւն կերպով:
Երեկ մեզ աջողկեցաւ լսել կոնցերտի մեջ
մի հայ երիտասարդի, պ. Մոյսիսեանի ձայնը:
Պարտնի ձայնը մի շատ հազապիւստ տե-
նորի ձայն է. դա կատարելա գանձ է, թէ՛ն
անհայտ, անգրագայան գանձ է: Եթէ պա-
րտնը ուսում առնի, նա կարող է մի ճշմա-
րատ երեւելի երգիչ դառնալ: ՏԵՆԻՍԻՆԵՐ
առհասարակ հազապիւստ են աշխարհիս
երեսին, բայց մանաւանդ այդ տեսակ բար-
ձր, մաքուր, զօրեղ և մեծապիւստ հնչիւ-
նով տենիսները: Բայց ո՞վ է օգնում նրան
որ իր ուսումը շարունակի. ոչ ոք: Նա ին-
քն միջոցներ չունի, որ գնայ Ա. Պետեր-
բուրգի կոնսերվատորիա, երաժշտական զըզ-
րոցը: Նա տալիս է մի կոնցերտ ֆիլիսոսոփ,
—եւ գրեթէ ոչ ոք չէ գալիս, իսկ մեր հա-
րուստները վերադարձնում են նրան իրանց
ուղարկած տոմսակը, մի կողմէ էլ չը փնա-
րելով իրանց ստացած տոմսակի համար....

Բայց եթէ ժամանակը, որի մեջ մենք
կառնած չունենք, նոյն Մոյսիսեան երեւելի
երգիչ կը դառնայ, նոյն հայերը կը պարծի-
նան, որ կայ մի երեւելի հայ երգիչ, որ օ-
ւղբանիւրեմ է երգում, թէ՛ն իրանց ոչինչ
չեն արել նրան օգնելու ուսում աւարտելու:
Համար, ամսական մի քիսուն ռուբլ էլ չը
տուեցին, որ մի չորս հինգ տարի սովորի
երաժշտական դպրոցում, իսկ խզձը գուցէ
իր կողմիցով, գուցէ օտարների հաշւով
կը սովորի....

Ինչով բացատրել այն անմիջական երեւո-
թիւնը որ հայերի մեջ չը կայ ոչինչ հասա-
րակական համբաւութիւն, որ հայերը

անընդունակ են ընկերութեամբ, ընկե-
րակցութեամբ գործել:

Թիւրքաց և պարսից տիրապետութեան
գրեթէ ստրկութեան տակ հայը ընտելա-
ցել է այն մտքին, որ ամեն մարդ ետակա
պէտք է դառնայ, միմիայն իր մասին և իր
ընտանիքի մասին հոգայ, իր համար իր
մարտնչով փողեր դիւլի, իսկ հասարա-
կութեան հետ նրա կապերը խզվեցան: Մեր
մեջ այլ ևս չը մնաց ոչինչ հասարակական
կապ.... Այլ ևս չը պատճառ որ հայը չէ բմ-
բունում ոչ հասարակութեան, ոչ ազգու-
թեան, ոչ էլ հայրենիքի գաղափարները:
Նրանք հաւաքական գաղափարներ են, որոնց
կարգիլ է հասնել հասարակական յարաբե-
րանքի կրթութեամբ: Հայի համար մատչելի է
միայն մի գաղափար, իր անձի և իր ըն-
տանիքի նկի գաղափար, բանի որ ընտանիքը
նոյնպէս իր համար գոյութիւն ունի: Հայը
ապրում է միայն իր փոքի համար, իսկ փո-
քերը դիզում է իր ժառանգների համար:

Հայը որպէս իր ժառանգների վրա, նու-
յալ է միմիայն իր սիրական, իր կնոջը
ծնված երեխաների վրա, բայց նա դեռ չէ
հասնել այն հասկացողութեանը, որ ամբողջ
ազգի գաւառները մեր ժառանգներն են,
որ մի ազգի երեկայ սերունդի ժառանգները
նոյն ազգի ապագայ սերունդներն են:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՐՈՒՄ

Օգոստոսի 2-ին

Ամեն մի առողջապատ անհատը կարող է պարզ
երևակայել որ եկեղեցի, ժողովուրդ, ժողովրդի
իրաւունք, ժողովրդի ձայն, ժողովրդի պահանջ,
ժողովրդեան ժառանգութիւն, ինչո՞ք, արդարու-
թիւն և ճշմարտութիւն ամենը գտնված է աղի-

տութիւնից օգուտ բաղող և անխիղճ համարած-
ների անձնական շահերին և կրքի կամայականու-
թեան Շամախու երկսես դպրոցները վաղուց է
որ բարակացան երկխաչ և կիսադիակացած
սերունդ են, շատերը պատում են շուշիք դուրս
փչելուց զիւլիկի գան: Բազալի լուսաւորական
երկու եկեղեցիները ի միասին հազիւ հազ կա-
րող են մի գիւղական եկեղեցի կազմել: Նարեկուր
է երակայնի մի բազալի երկու եկեղեցիներ ու-
րում ունեն մի տիրացու և տիրացուն էլ շարա-
վը մի անգամ այդ եկեղեցիների մուտք գործե-
լուն անտես առնի.... ուրիշ ինչ նարեկուր է եր-
կարարները:

Շամախու վիճակի գիւղական հայերի նոյնք
և մասոր պահանջներն էլ յանձնված են միմե-
րի իմաստասրութեանը: Անցելով ամսի 25-ին էր
որ մեր փողոցում մի քանի գիւղական հայեր
յուսանաւորած և վերաւորած խօսում էին հե-
տեւեւալ: Մի որ և ինչ քանիստները վարդապե-
տի արքանական զործակալ, չը նայելով որ նա
Վաղարշապատ գիւղում տիրում է 100 տուն ծխի
հետ և մի ընդարձակ խաղողի այգու, հազիւ
հազ է լազնդում եկեղեցիների վերջին նորանցի
ազատիլ: Վաղարշապատ գիւղից 8 վերստապիւմ
100 տուն Աղալիւն գիւղը, 12 վերստապիւմ
120 տուն Ուլալի գիւղը, և 15 վերստապիւմ
Գեօկլայի 25 տունը. ահա այդ տարաբախտ գիւ-
ղերի նոյնք որ օրինակատարութեանը թուաւա-
ցեալ նա ժողովրդից էին յուսանաւոր և վերաւոր-
ված գտնադատարները: Երբ ի միջի այլոց նրանք
ասում էին թէ բոլոր տարաւայ ընկալաւոր էրանք
գուրկ և կարտ են եկեղեցական ժամակարգու-
թեան, և եկեղեցու գանգակի ձայն լսելուն
ու եկեղեցի ներս մտնելուն, միայն այնպիսի դեպ-
քերում եկեղեցու դռները բացվում են, երբ ի-
րանց մեջ կը պատահի մի մկրտութիւն, մի պը-
տակ, և կամ մի նշնցեալ: Պատահած նշնցեալի
դիակն էլ խօ միմեք օրինակատար տեղ հօր զու-
ները և նրա կամքը առնելը, անուշտ գարշա-
նաւ պիտի գերեզման ինչնեւ, թէ՛ն այդ գիւ-
ղերի ամենամօտ հարեան գիւղերում ևս զը-
տնվում են բացի գործակալ Տօրից էլի չորս
քահանայեր, ինչպէս է Ուլալի գիւղից 5
վերստապիւմ 50 տուն Արշալայի գիւղի
աղքատ քահանայ, հնչեց Վաղարշապատ իրան մեջ
երեք քահանայեր, և Գեօկլայից 6 վերստապա-

տալ քրոջն: Երբ էլ չը կարողանում կը յանձ-
նուիմ կուր գետին, վտերիս նորա տղաների մեջ
կը թնայեմ: Ժողովի, ծանօթների, ինձ մուտա-
կան, կամ տարաբնի պէտք չէ տեսնել: Իսկ քոյ-
րու, եթէ բարի բազմ ունի, մի ողորմած սիրտ
մարդու կը հանդիպի, որ նրան իրեն ամուսն-
կանն և մօրս էլ կը պահէ: Իսկ եթէ ոչ, իմ
ճանապարհս մեջ կը մտնի նա էլ, և գուցէ ինձ-
պէս աւարտէ նա էլ:

Երբ երեկոս պրծաւ, միւս երկուստ միաձայն
կանչեցինք հրեշտա՛ր է:

Գուցէ ուսումնասիրանք աւելի հօգը լի-
նեն: Հայ օրդոյնական ուսումնասիրանքի հա-
մար ծրագիր ստուգները թող չը մոռանան
աղքատ աղկալ և տառապալ կնոջ վիճա-
կը:

Աղջկեք, գրե՛, հաշուի և ձեռարկեստի հետ,
ուսումնասիրանք պէտք է տանի իր հետ նաև այս
զաղափար թէ, պատուով մի պատար հայ հա-
րկու համար, ի հարկին նաև աղանդութիւնը
նուստանացող չէ, և այդ ժամանակ նա կիսով
չափ փրկուի ևս լինի:

Աղջկեք, գրե՛, հաշուի և ձեռարկեստի հետ,
ուսումնասիրանք պէտք է տանի իր հետ նաև այս
զաղափար թէ, պատուով մի պատար հայ հա-
րկու համար, ի հարկին նաև աղանդութիւնը
նուստանացող չէ, և այդ ժամանակ նա կիսով
չափ փրկուի ևս լինի:

փութ 40 տուն ընդամենը գիւղի աղքատ քահանայն: Բայց ասում են զբանջար տասնիկ հրամայված է առաջնորդից թէ հրաւիրմամբ և թէ պատահմամբ այդ գիւղերում օրինակատարութիւն չանել և չլինել զործակալ հօր շաներին: Միթէ կարելի չէր որ հոգեւոր իշխանութիւնը այդ յուսանալով զգիւղացիների դուռ վրանէր թեթեւանելու և հեշտանելու համար բաժանէր զանոց յիշեալ 5 քառանկերի վրայ, կամ թէ գոն ճնշեց ամենքը յանձնէր ղալազեղաներէք քահանայներին, որ իւրաքանչիւրը առանձին առանձին հովիւներ և կամ հերթապահութեամբ, և ոչ թէ ղալազեղայի կէտը թողել երկու քահանայներին, իսկ կէսի հետ 8, 12, և 15 վերտում երեք գիւղին էլ իր զործակալին զոհէր, և քաղցած երիտանի հացը ինչեւորից ինչով գցէ մի շահանքով:

Բայանելով այս փաստերը խմբագրելով, խոնարհաբար խնդրում ենք իբրև ազգային ամառիկի ներկայացուցչի, հրաւիրել էջմարմնի հոգեւոր իշխանութեան ուղարկութիւնը թշուառ Ուշտալցոց, Աղայիշնացոց և Գեօկաշուց վրայ Դաւթաթու արգի հոգեւորական իշխանութեան կամալականութիւնը բոլորովին հակառակ է վեհափառ Հայապատկոց պարզեաւ հրահանգին:

ՆԵՐՏԻՆ ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 13-ին, Արթուրու թաղում մի կոնցերտ ներկայացուին կար, որին մասնակցեց պ. Մոյսիսեան Պարոնը ձայնը, որ մեր առաջին անգամ ենք լսում, մի կատարեալ գանձ է, թէև անկախ գանձ: Դառ հազիւ է պատահում լսել լեւնօրներին մօտ ամենաբարձր ձայններ այդքան մաքուր, կրկնել ձայնը, ինչպէս պ. Մոյսիսեանը մի մօտ, Գիւրգուրաբ հասարակութիւնը գրեթէ չէ կար թաղարումը լսել պ. Մոյսիսեան ուսում առնի, նա կարող է դառնալ նշանաւոր երգիչ: Ասում են պարոնը միջոցներ չունի, որ փայլ երաժշտական զարդ, այնտեղ իր ձայնը կատարելագործելու:

Մեզ պատում են, որ մի շատ հարուստ թիֆլիսցի հայ, որին պ. Մոյսիսեան մի լծալի ասում էր ուղարկել իր կոնցերտի համար, վերադարձել է պարոնին իր տոմարը, առանց փող վճարելու: Ի հարկի, ինչ կարելի է պահանջել այդ տեսակ մի հարուստից: Նա կարծում է, որ այդ ներկայացուող նման է այն բոլոր սիրողների ներկայացուցիչներին, որոնք շատ անգամ տրվում են մեզանում այս ինչ, այն ինչ մարդու համար փողը ինչ փող հաւաքում: Մի տղան, հարուստ հայից չէ կարելի պահանջել, որ նա այնքան զեղարկաստական զարգացում և ճաշակ ունենայ, որ հասկանայ թէ Մոյսիսեանի ձայնը ոչ թէ միայն մեղանկար, բայց և ամեն երկրում հաշտալիտ և նշանաւոր ձայն կը համարվէր և ամեն երկրում կաշխատէին այդ տեսակ գանձ ունեցող չքաւոր երիտասարդին օգնել իր ուսումը շարունակելու:

Մեզ գրում են ԱՐԱՍԻԱՍԻԱՅԻՆ ԷՋԻՄԱՆՆԱՅԱՅԱՆ կալուածները Ախալցխայում գտնվում են շատ աննախնայելի դրութեան մէջ, որովհետեւ էջմարմնի խորում է, նշանակելով վաշխառու կառավարիչներ իր կալուածներին վրայ Դիւնապահ գիւղի անտառը թերեւ նախկին վաշխառուի ձեռքում է: Նա արժանապատկան պարտքների կապին, (ընկուղեւ) ծառերը կտրում և վաճառում է առանց էջմարմնի գիտութեան:

Շնորհալուծութեամբ ստացանք պ. Յովհաննէս Նազարեանցի Հայոց լեզուի ուսուցչի աշխատանքներին շնորհող տարուայ դասագրքերը: Գիւրգու ռուի ի հարկի իր արժանաւորութիւնները, բայց մի և նոյն ժամանակ խորհողը կը տալիք այդ տեսակ գրքեր կազմակերպել ասել ինքնուրույն կերպով կազմել և ոչ թէ հետեւ ստիպարով մի որ և է առաջ դասագրքին: Օրինակ հեղինակը պատմում է թէ ինչ է արդիւնաբերում բնութիւնը օգոստոս ամսին և ասում է հետեւալով, այսպիսով մուրբեցնելով մանուկների տեսակցութիւնը: Օգոստոս ամիսը պարզապէս ամիս է և գեղեցիկ խնձորներով ու տանձներով է զարդարվում: Առաջ բերում է մեզ ծիրան լիսող

տեսակ տեսակ անուշահամ զեղձեր, վերջը կամայ կամաց գալիս են սենին ու ձմերուկը, վառանքն ու լորեն, զգուժ և սոցա նման զովարար բոյսեր: (Երես 72): Ուրիշն ամիսը զարգացում է գեղեցիկ խնձորներով ու տանձներով, իսկ տեղի խնձորներով ու տանձներով երբ է զարգարվում: Բացի ստանդից վարունքը, իսկաւ միթէ օգոստոսին է գալիս, ընդհանրապէս օգոստոսին վերջանում է, իսկ մայիսին է լինում արդեն: Եւ հեղինակի կարծիքով զգուժը, լորեն պատկերներ են և այն էլ զովարար: Ի՞նչ կը նշանակի այդ տեսակ դասագրքեր գրել, թարգմանելով նրանց ստիպարով օտար զասագրքերից առանց սեփական ուղեգրով մտածելու:

Մարաբաղաբի լրագիրները հաղորդում են որ շուտով կը վերցնի Ս. Պետրոսեանը: Եւ իսկ իրականում կամիտեմ, աչքի առաջ ունեցել այն վերանորոգութիւնները, որոնք պետք է կատարվեն իրականում փոխարքայութեան մէջ:

ԱՐՏԱՒԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐԱՍԻԱՅԻՆ ԽՆԴԻՐ ՄԱՐԿՈՒՐ

Եւրօպական հասարակական կարծիքը զբաւող իրանդական, Տունիսի, Տրեանի և գաղթականութեան ինդիւստրիան աւելացում մի նորը, պապական ինդիւստրիա թեպէս այդ ինդիւստրիա կատարելու են իր իրականում անուշահամ, որովհետեւ 20 տարի է, ինչ նա գոյութիւն ունի, սխեմայ այն օրից, երբ սկսվեցաւ իտալիայի միութեան գործը, բայց վերջին ժամանակներում նա չափազանց լարվեցաւ և ընդհանուր եւրօպական նշանակութիւն ստացաւ: Պապը նորից յայտնում է, որ նրա գրութիւնը անտանելի է, որ նա ստիպված է վատիկանի մէջ գերի մնալ և որ նա չէ համարձակվում երևալ Հռոմի փողոցների վրայ:

Իհն XIII այգիների բովանդակութեան մի ձառ. արտասանեց հռոմէական կոնստանտինոպոլիսի առաջ այն տիւրք անկախութեան իրենի առիթով, որ պատահեցաւ հանդուցեալ պապ Պիոս IX մարմին տեղափոխութեան ժամանակ: Հռոմէական եկեղեցու առաջնորդի կողմից դա մի նոր մեղադրանք էր իտալական կառավարութեան դէմ, որ լրացնում էր կարգիտող Եսոփրիսի կողմից եւրօպական պետութիւններին զեռ առաջ ուղարկած գանգաւոր:

Օգոստոսի 7-ին Հռոմի մէջ նոր անցքեր պատահեցան, որոնք միջոց են տալիս պապական կառավարութեանը ժամանցացը լինել այն փոսնի վրայ, որ սպանում է կաթոլիկութեան պետին իտալիայի մայրաքաղաքի մէջ: Տիրապետելով Հռոմին, վիկտոր-լանտուէլ իտալական թագաւորի կառավարութիւնը ապահովեց պապական անկախութիւնը: Այդ օրէնքի մէջ ասված է. «պապի անձնաւորութիւնը սուրբ և անմաշկուն է»: Այդ օրէնքով իտալական կառավարութիւնը կաթոլիկ աշխարհի առաջ պարտաւորվել է չը թողլ տալ ոչ մի բան, որ խանգարէր պապի ազատութիւնը իր պարտականութիւնները և կաթոլիկ եկեղեցու պետները հոգալու ժամանակ, պարտաւորվել է եւրօպայի առաջ պաշտպանել պապի իրաւունքները, իբրեւ մի անկախ թագաւորի իրաւունքները: Բայց այդ պաշտպանութիւնը յանձն առնող կառավարութեան աշխարհի մի քանի հազար մարդիկ մի ժողով կայացրին, որի ժամանակ թէ պապութիւնը և թէ նրա ներկայացուցիչները, որոնց թւում էր և Իհն XIII պապը նախաժողովների և անձնակազմի խնդիրներին: Բացի այդ պապի տեղափոխելը ստա՞յ կը մնէ պապական ինդիւստրիա, որ կը զբօսի արժանի և որ զբւարութիւններ կը պատճառէ ամբողջ եւրօպային:

Նից անուշաղիր թողնել պապի ապահովութեան մասին օրէնքը և անյապար գրաւել պապական պալատները, որիչ խօսքերով արտաքին պապին Հռոմից:

Այդ վճիռը հեռեկան է. «ի նկատի առնելով, որ պապութիւնը և իտալական միութիւնը պատմական և քաղաքական հասարակութեան են կապմուն, որ պապը 35 անգամ հրաւիրել են օտարներին յարձակել իտալիայի վրայ, որ պապութիւնը վնասում է իտալական ազգի ինքնակալութեանը, որ Աստուածային իրաւունքը, որի վրայ յենված է պապութիւնը, չէ համապատասխանում իտալական ժողովրդական իրաւունքներին, որ պապութիւնը իբրեւ կրօնական հիմնարկութիւն իր ողով, սկզբունքներով և նպատակներով մերժում է մտքի ու խելիքի անկախութիւնը, հակառակ է ամեն մի նոր իրաւացի զաղափարին և կորչում է միջին դարերի խաւարի մէջ, որ ապահովութեան մասին օրէնքը, իբրեւ պապի բարձրագոյն հեղինակութեան հիմք, նորից յարուցանում է այդ խաւար իր բոլոր հեռեկաններով, ի նկատի առնելով այս բոլորը, հռոմէական ժողովուրդը պահանջում է փոխել այդ օրէնքը և գրաւել առաջ և անկախութիւնը»:

Հիմարիտ է, այդ վճիռը այնպիսի մարդիկ են կայացրել, որոնք հետ իտալական կառավարութիւնը համբարաշէ չէ և դա համարվում էր ընդունվեցաւ եւրօպայի մէջ այնպիսի մարդիկանցից, ինչպէս Լուի Բըլաւ, Վիկտոր Զիւգո, Տերուրի Գարիբալդի, որոնք կարծիքները պապականութեան մասին արդէն վարդուց յայտնի են, մինչև անգամ պոլիցիայի միջամտութեան շնորհիւ վճիռը չը կարողացվեցաւ, բայց այնու ամենայն պապը այդ ժողովից վերաւորված էր Պապական կառավարութեան համար այդ ժողովը մի գիւտ և և այդ պատճառով թէ կերպական և թէ արմատական լրագիրները շտապեցին հրատարակել թէ ժողովի մէջ արտասանած ձառերը թէ վերջիվերջ վճիռը կառավարութիւնը կաշխատեց այդ լրագիրները, որոնք նրա գրութիւնը դժուարացրին, օպպոզիցիոն այն, ինչի ընթերցանութիւնը արգելված էր պոլիցիայից և այդպիսով հեռացրեց իրանց պատասխանատուութիւնը արմատական կուսակցութեան օգնութեան համար: Բայց պապական միսիսարները կարող են պնդել, որ իտալական կառավարութեանը առաջնուց յայտնի էին այդ ժողովի նպատակները, իսկ նա հանգստութեամբ նայում էր ժողովի համար տեսնող պատրաստութիւններին և նրանց արգելներ չէր դնում իտալական կառավարութիւնը կարող է ի հարկի մնալ նուցոյց լինել իտալական սահմանադրութեան վրայ, որ ապահովում է ամեն տեսակ ժողովների իրաւունքը փակված տեղերում, բայց այդ ձեական արդարութիւնն էլ առիթ էր տալ պապին գանգաւորել իր դրութեան անապահովութեան վրայ:

Լուր է տարածվում, որ պապը, ի նկատի առնելով այդ հանգամանքները, մտադիր է թողնել յաւիտենական քաղաքը և տեղեկափոխել Մուտա կղզին և անդիսական օրէնքներին ապահովութեան տակ լինել: Եթէ պապը կատարէ իր այդ մտադրութիւնը, իտալական կառավարութեանը նա մեծ դժուարութիւններ կը պատճառէ և Հռոմն էլ կը կորցնէ համաշխարհային մայրաքաղաքի նշանակութիւնը: Բացի այդ պապի տեղափոխելը ստա՞յ կը մնէ պապական ինդիւստրիա, որ կը զբօսի արժանի և որ զբւարութիւններ կը պատճառէ ամբողջ եւրօպային:

ՎԱՍԻՐԱՍՏՈՒՄ ԱԶԱՐԵԱՆԻ

Հռոմէական ազգայնոց Պատրիարք-Կաթողիկոս Գեղը: Ազարեան արբազանի ընտրութեան առիթիւ Հռոմի մէջ Պապը կարգիւնալաց ժողովին մէջ հեռեկան յայտարարութիւններ արեւ:

Հիմա, յարգելի եղբարք, ինդիւստրիա կը ծանուցանեմ ձեզ Հայոց ինդիւստրիա կաթողիկոսին նորոգ ընտրութիւնը: Երբ այն ցաւալի հերձուածը վերջանալու վրայ էր, մեր յարգելի եղբարք Անթուան Հասուն, որուն հռոմէական ծիրանին տուիք իւր արժանեաց համար, Պատրիարքութեան հրաւիրութեամբ Ուստի այնպէս կարգադրեցինք որ մեր յարգելի եղբարիկը, Հայոց եպիսկոպոսները սինհոդ կազմեն և նոր Պատրիարքի մը ընտրութեան ձեռնարկեն: Աստի յուլիս 6-ին Ս. Աստուածածին եկեղեցու մէջ սինհոդը գումարուելով, քուէից մեծամասնութեամբ Նիքոնիացի Պետրոս Ազարեան արքեպիսկոպոսը Պատրիարք ընտրեց որ և անուանեցաւ Պետրոս Ժ:

Հայ եպիսկոպոսները յուլիս 8 թւական յատուկ գրութեամբ մը սոյն ընտրութեան վերաբերեալ տեղեկութիւնները հաղորդեցին մեզ: Սրա փառանքով որ Պատրիարքական արժանաւորութիւնը իւր բոլոր ոյժին ու զօրութիւնը կրանելի Պետրոսին առաքելոց երեցագունին կրնուի, որ Աստուծոյ կողմանէ գտանք և այժմեք վերակացու կարգուելով, ինքն միայն ունի երկնից արքայութեան բանալին, խնդրեցին մեզմէ սոյն ընտրութիւնը վաւերացնել առաքելական իշխանութեամբ մերով:

Մի և նոյն ինդիւստրիա կաւ մեզ նորմալ տիր Ազարեան Պատրիարքն ալ, որ յուլիս 8 թւականում գրութեամբ մը վերաբերել կը կրնիք այն հաւատոյ դաւանութիւնը գործ և սինհոդին առաջ յայտարարած էր: Սոյն նամակաւ իւր յարգանքը և բարեկամութեան զգացումներն ալ յայտնած է առ առաքելական աթոռն և նորա իշխանութեան հաւատարիմ մնալ խոստացած է:

Մեքե հաւատքի տէր, յարգելի եղբարք, թէ նորմալ Պատրիարքը որ իւր վարած քաղաքական պաշտօններուն մէջ միշտ հաւատարմութիւն առ Հռոմէական եկեղեցին, միշտ փորձառութիւն և եկեղեցու միութեան անկողի պահպանութեան համար եռանդ ու նախանձ ցուցցած է, ամեն կարելի ջանք պիտի ընէ հոգիներու փրկութեան և իւր մեծ պաշտօնին մէջ բարի հովուի մը պարտաւորութիւնները կատարելու և ժողովուրդը գոհ ընելու համար: Այս փոսահութեամբ և Արեւելեան գործոց փրօփանդանայի ժողովին կարծիքն առնելէ ետեւ, ըստ ինդիւստրիա շտապեցաւ Հայ եպիսկոպոսաց որոշեցնել սոյն ընտրութիւնը հաստատել և Պետրոս Ազարեանը Հայոց ինդիւստրիա Պատրիարք հռչակել:

Ուստի իշխանութեանը Ամենապատկաւր Պատրիարքը արքայ առաքելոցն Պետրոսի և Պողոսի և մերով իշխանութեամբ կը հաւատարմութեամբ Հայ եպիսկոպոսաց մեր յարգելի եղբարք կատարած սոյն ընտրութիւնը յանձն Պետրոս Ազարեանի գործը Նիքոնիայի կաթողիկոսներն ապահովելու կը բարձրեցնենք, զայն մի և նոյն եկեղեցու հովիւ և Պատրիարք կարգուելով: Յասուն Հօր և Որդու և Հոգւոյն սրբոյ:

(Հայրենիք)

ՄԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Մասին» լրագրի մէջ ևս տպվեց Միսեալ ընկերութեան նախկին ջնջումը: